ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՇՈՐԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Հիմնաբառեր. *Երևան քաղաքի խոշորացում, բնակչության աճ, սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, քաղաքային հիմնախնդիրներ*

Արաքսյա ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2019 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ ստանալով կառավարման մագիստրոսի աստիճան: 2019 թ.-ից մինչ օրս սովորում է ՀՊՏՀ ասպիրանտուրայում՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Երևանը ՀՀ ամենախոշոր քաղաքն է ինչպես բնակչության թվով, այնպես էլ առևտրատնտեսական և սոցիալ-մշակութային նշանակությամբ: Քաղաքի խոշորացումը թեպետ կարող է դիտվել որպես դրական երևույթ, սակայն դա ունի նաև իր բացասական կողմերը: Թե՛ բնակչության, թե՛ սոցիալ-տնտեսական կյանքի կենտրոնացման հետևանքով մայրաքաղաքում կուտակվել են մի շարք հիմնախնդիրներ:

Սույն հոդվածում փորձ է արվել ուսումնասիրելու Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա իրավիճակը՝ դիտարկելով դա խոշորացման համատեքստում, ինչպես նաև պարզելու, թե քաղաքի խոշորացումն ինչ հիմնախնդիրներ է առաջացնում:

Մայրաքաղաք Երևանում է բնակվում երկրի բնակչության զգալի մասը: 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ քաղաքում բնակվում է մոտ 1 087,9 հազար մարդ[1], որն ամբողջ հանրապետության բնակչության գրեթե 37%-ն է: Ընդ որում, այս ցուցանիշը վերջին տարիների ընթացքում ավելի է աճել:

Այս ցուցանիշները վկայում են Երևանում բնակչության կենտրոնացվածության չափազանց բարձր մակարդակի մասին: Մինչդեռ հարկ է նշել, որ այլ երկրներում մայրաքաղաքային բնակչության թիվը հիմնականում տվյալ երկրի ամբողջ բնակչության առավելագույնը 15%-ն է:

Տնտեսական ցուցանիշները վկայում են, որ Երևանում է կենտրոնացած ոչ միայն երկրի բնակչության, այլև ողջ տնտեսական ներուժի զգալի մասը: Նույն պատկերն են

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ, https://www.armstat.am/am/?nid=82&id=2279

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Երևանի մշտական բնակչության թվաքանակը 2016-2020 թթ*. (մլն մարդ)[2]

	2016	2017	2018	2019	2020*
Երևանի մշտական բնակչության թվաքանակը	1 075,8	1 077,6	1 081,8	1 084,0	1 087,9
Երևանի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ բնակչության թվաքանակում (%)	36,0	36,2	36,5	36,6	36,7

**Երևան քաղաքի մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ:*

արտացոլում նաև տնտեսության առանձին ոլորտներին և ճյուղերին վերաբերող վիճակագրական ցուցանիշները: Այսպես՝ 2018 թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածներում բավական մեծ են. մասնավորապես՝ արդյունաբերության բաժինը կազմել է ՀՀ արդյունաբերության 38,0%-ը, շինարարությանը՝ 52,3%-ը, մանրածախ առևտրինը՝ 72,8%-ը, ծառայություններինը՝ 81,7%-ը[3]: Մի քանի տարիների առումով, Երևանի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռների փոփոխությունները հանրապետության համապատասխան հատվածների ծավալներում ներկայացված են աղյուսակ 2-ում:

Վերոգրյալ ցուցանիշները վկայում են Երևանում տնտեսության կենտրոնացվածության բարձր մակարդակի մասին: Փորձենք առավել մանրամասնորեն դիտարկել հիմնախնդիրը: Այսպես՝ 2018 թ.-ին մայրաքաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 735 190,0 հազար դրամ, որը, ինչպես արդեն նշվեց, ամբողջ հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալի 38,0%-ն է: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Շիրակի և Լոռու մարզերում, որտեղ տեղակայված են ՀՀ երկրորդ և երրորդ խոշոր քաղաքները, արդյունաբերական արտադրանքի ծավալը համապատասխանաբար՝ 69 625,8 և 89 424,9 հազար դրամ է: Կարծում ենք՝ այս ցուցանիշներն առավել քան խոսուն են: Սակայն, պատկերն ամբողջական դարձնելու համար, ըստ գծապատկեր 1-ի, ներկայացնենք ՀՀ մարզերի և Երևանի արդյունաբերական արտադրանքի վերջին մի քանի տարիների ծավալները:

Գծապատկեր 1-ից երևում է, որ Երևանն արդյունաբերական արտադրանքի ծավալով զգալիորեն գերազանցում է ՀՀ մարզերին: Ընդ որում, այդ ցուցանիշը վերջին մի քանի տարիների ընթացքում աճի միտում է ցուցաբերել:

Մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման գործում մեծ է նաև մանրածախ առևտրի դերը: Մանրածախ առևտ-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Երևանի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում 2015-2018 թթ. (%)[4]

	2015	2016	2017	2018
Արդյունաբերություն	41,2	40,9	40,8	38,0
Շինարարություն	63,7	61,0	47,9	52,3
Մանրածախ առևտուր	76,4	74,0	74,1	72,8
Ծառայություններ	81,4	80,6	80,8	81,7

[2] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրներ՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, 2018, 2019, ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հունվարի 1-ի և հուլիսի 1-ի դրությամբ:

[3] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, https://www.armstat.am/file/article/marzer_2019_25.pdf

[4] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, 2017, 2018, 2019:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Երևանի և ՀՀ մարզերի արդյունաբերական արտադրանքի ծավալները 2014-2018 թթ.[5]

ռաշրջանառության ծավալներով և մանրածախ առևտրի օբյեկտների թվով մայրաքաղաքը կրկին առաջատար դիրքում է (աղյուսակ 3 և 4):

Վերը բերված ցուցանիշներից ակնհայտ է դառնում, որ, ըստ ՀՀ մանրածախ առևտրի օբյեկտների թվի, Երևանն ունի զգալի առավելություն, քանի որ այստեղ են գործում դրանց ընդհանուր քանակի կեսից ավելին: Հարկ է նշել նաև, որ եթե

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Երևանի և ՀՀ մարզերի մանրածախ առևտրի շրջանառությունը (մլն դրամ)[6]

	2014	2015	2016	2017	2018
ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունը	1 466 090.6	1 313 998.1	1 243 637.0	1 335 742.8	1 411 771.8
Երևանի մանրածախ առևտրի շրջանառությունը	1 211 176.3	1 004 305.8	920 522.7	989 557.3	1 027 811.6
Տեսակարար կշիռը (%)	82.6	76.4	74.0	74.1	72.8

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Երևանի մանրածախ առևտրի օբյեկտների տեսակարար կշիռները ՀՀ մանրածախ առևտրի օբյեկտների ընդհանուր թվաքանակում 2014-2018 թթ. (%)[7]

	Քանակը				
	2014	2015	2016	2017	2018
Մանրածախ առևտրի օբյեկտներ	54,9	53,6	53,8	52,6	51,7
այդ թվում՝					
խանութներ	63,8	60,9	60,3	57,9	56,0
կրպակներ	25,8	27,3	28,5	30,9	34,4
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	31,8	31,8	26,3	26,3	27,8
սպառողական ապրանքների շուկաներ	50,8	50,0	52,8	52,8	50,0
առևտրի այլ օբյեկտներ	19,9	22,7	23,9	23,5	25,4

[5] Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, https://www.armstat.am/file/article/marzer_2019_11.pdf

[6] Աղյուսակը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, https://www.armstat.am/file/article/marzer_2019_15.pdf

[7] Նույն տեղում:

տվյալները դիտարկենք ըստ մանրածախ առևտրի օբյեկտների տեսակների, ապա կարող ենք վկայել, որ Երևանի մանրածախ առևտրի օբյեկտների թվաքանակում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն խանութները: Ընդ որում, ամբողջ հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության 64,1%-ն ապահովում են մայրաքաղաքի 8070 խանութները, որոնք կազմում են ՀՀ մանրածախ առևտրի օբյեկտների ընդհանուր թվաքանակի 45,9%-ը: Այս ցուցանիշները թույլ են տալիս պնդել, որ Երևանում է կենտրոնացած ոչ միայն երկրի բնակչության զգալի մասը, այլև բնակչության առավել վճարունակ խավը:

Շինարարության 2018 թ. հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Երևանին է բաժին ընկնում դրա ծավալների զգալի մասը, մասնավորապես՝ ՀՀ հիմնական միջոցների գործարկման 70.8%-ը, շինարարության 52.3%-ը, շինմոնտաժային աշխատանքների 54.0%-ը[8]:

Երևանն առանձնանում է նաև մատուցվող ծառայությունների ծավալով, որոնք առնչվում են մշակույթին, զվարճություններին, հանգստին, ինչպես նաև կրթական, առողջապահական և այլ բնույթի սպասարկմանը (գծապատկեր 2):

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, միայն 2018 թ.-ին ամբողջ հանրապետության ծառայությունների գրեթե բոլոր տեսակների մատուցման մեջ բավական մեծ է Երևանի տեսակարար կշիռը: Ընդ որում, մի քանի տարիների կտրվածքով այդ ցուցանիշն ուսումնասիրելիս ակնհայտ են դառնում վերջինիս աճի միտումները:

Քաղաքում են կենտրոնացած նաև պետական կառավարման մարմինների զգալի մասը, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովն ու Կառավարությունը, բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմ-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Երևանի ծառայությունների (ըստ տեսակների) տեսակարար կշիռը ՀՀ ծառայությունների ընդհանուր ծավալում 2018 թ. (%)[9]

[8] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, https://www.armstat.am/file/article/marzer_2019_13.pdf

[9] Գծապատկերը կազմել է հեղինակը: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, https://www.armstat.am/file/article/marzer_2019_15.pdf

նադրամների, դատաիրավական մարմինների, բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները և այլն:

Ինչպես ակնհայտ է դառնում վերը բերված ցուցանիշներից, մայրաքաղաքի մըշտական բնակչության թիվն անընդհատ աճում է, բացի դրանից, սոցիալ-տնտեսական կյանքի նման կենտրոնացման արդյունքում շրջակա բնակավայրերից անընդհատ ներհոսք է տեղի ունենում դեպի Երևան: Մարդիկ տարբեր պատճառներով (աշխատելու, սովորելու, գնումներ կատարելու, բուժվելու, այս կամ այն ծառայությունից օգտվելու և այլն), ինչպես նաև զբոսաշրջիկները հիմնականում իրենց օրվա մեծ մասն անցկացնում են մայրաքաղաքում: Բնակչության նման կենտրոնացման պայմաններում Երևանում կուտակվել են մի շարք հիմնախնդիրներ՝ կապված հիմնարար ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ միջոցների բացակայության, ենթակառուցվածքների զարգացման, բնապահպանական և տրանսպորտային հարցերի, բնակարանային անբավարարության հետ: Փորձենք դիտարկել այն պատճառահետևանքային կապը՝ ըստ որի առաջանում են նշված հիմնախնդիրները: Այսպես՝ մայրաքաղաքում սոցիալ-տնտեսական կյանքի նման կենտրոնացման պայմաններում բնակչության շարժը դեպի Երևան և Երևանի ներսում օրըստ-օրե մեծանում է, ինչի հետևանքով ավելանում են տրանսպորտային միջոցների քանակն ու հոսքերը՝ առաջացնելով ճանապարհային խցանումներ և տրանսպորտային համակարգի այլ խնդիրներ: Տրանսպորտային միջոցների շարունակաբար ավելացումը, իր հերթին, բացասական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա: Երևանում հաշվառված են մոտ 600 000 ավտոմեքենաներ[10], որոնք օդի և հողի աղտոտման հիմնական պատճառներից են: Շրջակա միջավայրի վրա բացասաբար են անդրադառնում նաև արդյունաբերության և շինարարության՝ Երևանում կենտրոնացման բարձր ցուցանիշները: Այսպես՝ ներկայում մայրաքաղաքում հաշվառված են մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցությամբ մոտ 531 կազմակերպություններ[11], որոնց գործունեության, ինչպես նաև քաղաքում ծավալվող շինարարության հետևանքով Երևանի օդային և հողային միջավայրը զգալիորեն տարբերվում է բնական վիճակից: Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ: Բացի դրանից, մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Բացի նշվածներից, պակաս մտահոգիչ չեն նաև կանաչ տարածքների օրեցօր կրճատվող ծավալները, որի հետևանքով իջել է օդի խոնավության մակարդակը: Այս ամենը վկայում է, որ Երևանը բնապահպանական առումով ծանրաբեռնված բնակավայր է, ինչն էլ, իր հերթին, բացասական ազդեցություն է գործում բնակչության կենսունակության և առողջության վրա: Միաժամանակ, համայնքի կողմից ոչ բոլոր ծառայություններն են մատուցվում արդյունավետորեն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ քաղաքի բնակչության թվի աճը գերազանցում է քաղաքային ենթակառուցվածքների զարգացման տեմպերը:

Այսպիսով՝ վեր հանեցինք թե՛ բնակչության, թե՛ սոցիալ-տնտեսական կյանքի կենտրոնացման առումներով Երևանում գոյություն ունեցող մի շարք ոլորտային հիմնախնդիրներ: Միաժամանակ, հիմնվելով վիճակագրական ցուցանիշների վրա, կարող ենք ասել, որ քաղաքի խոշորացումը դեռ շարունակվելու միտում ունի: Ուստի այս պայմաններում համայնքում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան առկա ռեսուրսներով հնարավորինս արդյունավետորեն լուծելու քաղաքային խնդիրները:

[10] Երևանի զարգացման 2020 թվականի ծրագիր, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/93/32dca49b36c57e3b-64f200a485f4de55046b901c.pdf

[11] Նույն տեղում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016, 2017, 2018, 2019:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ, https://www.armstat.am/am/?nid=82&id=2256
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. հուլիսի 1-ի դրությամբ, https://www.armstat.am/am/?nid=82&id=2279
4. Երևանի զարգացման 2020 թվականի ծրագիր, https://www.yerevan.am/uploads/media/default/0001/93/32dca49b36c57e3b64f200a485f-4de55046b901c.pdf

Аракся БАРСЕГЯН
Аспирант кафедры управления, АГЭУ

ГОРОДСКАЯ ЭКОНОМИКА

РАСШИРЕНИЕ ГОРОДА ЕРЕВАНА КАК НЕГАТИВНОЕ ЯВЛЕНИЕ

Ереван - крупнейший город Армении как по численности населения, так и по экономическому и социально-культурному значению. Хотя расширение города можно рассматривать как положительное явление, у него есть и отрицательные стороны. В результате концентрации населения и социально-экономической жизни в столице Ереване накопилось ряд проблем.

В данной статье предпринята попытка изучить текущее состояние социально-экономического развития города Еревана, рассматривая его в контексте расширения, чтобы выяснить, как расширение города приводит к возникновению проблем.

Ключевые слова: *расширение города Еревана, рост населения, социально-экономические показатели, городские проблемы*

Araksya BARSEGHYAN
PhD Student at the Chair of Management, ASUE

URBAN ECONOMICS

ENLARGEMENT OF THE CITY OF YEREVAN AS A NEGATIVE PHENOMENON

Yerevan is the largest city in Armenia both in terms of population and economic, socio-cultural significance. Although the enlargement of the city can be seen as a positive phenomenon, it also has its negative sides. As a result of the concentration of population and socio-economic life, a number of problems have accumulated in the capital Yerevan.

In this article, an attempt is made to study the current state of socio-economic development of the city of Yerevan, looking at it in the context of enlargement, to find out how the enlargement of the city leads to the emergence of problems.

Keywords: *enlargement of the city of Yerevan, population growth, socio-economic indicators, urban issues*